ՎԼԱԴԻՄԻՐ ԽՈՋԱԲԵԿՅԱՆ. Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX–XX դարերում, XXI դարի շեմին. *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2002, 526 էջ:*

Ամբողջ աշխարհում ժողովրդագրական (դեմոգրաֆիական) հիմնահարցերի ուսումնասիրության նկատմամբ բացառիկ հետաքրքրությունը պայմանավորված է գիտության այդ բնագավառի կիրառական մեծ նշանակությամբ: Ցանկացած երկրի տնտեսական զարգացման հնարավորությունների հաշվառման, հեռանկարների կանխատեսման համար ժողովրդագրության դերն անդնահատելի է: Այն հատկապես կարևոր է Հայաստանի տնտեսության զարգացման հեռանկարները պատկերացնելու, իսկ պատմական ժողովրդագրությունը հայրենիքի կորուսյալ տարածքների դեմոգրաֆիական իրավիճակը ներկայացնելու առումով: Ցավոք, մեզանում երկար ժամանակ գիտության այս ճյուղը չի եղել պատշաճ ուշադրության կենտրոնում: Շնորհիվ Վ. Խոջաբեկյանի վերջին 3–4 տասնամյակների ընթացքում ժողովրդագրության բնագավառում ոչ միայն ձեռք են բերվել լուրջ նվաճումներ, այլև ստեղծվել է ինքնուրույն հայկական դպրոց: Այդ ուղղությամբ նոր եզակի ու ծանրակշիռ աշխատություն է ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանի սույն մենագրությունը:

XIX–XX դարերի ընթացքում Արևելյան Հայաստանի բնակչության տեղաշարժերի, էթնոժողովրդագրական գործընթացների առանձնահատկությունների և օրինաչափությունների բացահայտմանը նվիրված Վլադիմիր Խոջաբեկյանի մենագրությունում հատուկ ուշադրության են արժանացել ինչպես Արևելյան Հայաստանում, այնպես էլ ամբողջ Անդրկովկասում հայ բնակչության աճի, տեղաբաշխման, զբաղմունքի հիմնահարցերը: Հարուստ վիճակագրական, արխիվային նյութի և տպագիր դրականության համակողմանի հետազոտության շնորհիվ լուսաբանվել են Հայաստանի բնակչության վերարտադրության ու միգրացիոն շարժերի փուլերը, դրանց ընդհանրություններն ու տարբերությունները նախորդ ժամանակաշրջանի և ներկա տարիների միջև: Առանձնակի ուշադրություն է հատկացվել ներկայումս Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող ժողովրդադրական տեղաշարժերի, ապագայում սպասվելիք միգրացիոն գործընթացների, դրանք մեր երկրի զարգացմանն ուղղորդելու, անցանկալի դեմոգրաֆիական երևույթները կանխելու խնդիրներին:

Աշխատության մեջ առաջին անգամ համապարփակ ձևով քննության են առնվում վերջին երկու հարյուրամյակների ընթացքում Արևելյան Հայաստանի բնակչության աճի, տեղաշարժերի, տեղաբաշխման միտումները, վերարտադրության ռեժիմը պայմանավորող սոցիալ-տնտեսական, քաղաքական ու բարոյահոգեբանական գործոնները: Համոզիչ փաստարկներով ներկայացված են ռուսական տիրապետության շրջանում (1828–1917 թթ.) զանազան ներդաղթերի, անհամեմատ նպաստավոր սոցիալ-քաղաքական ու տնտեսական լծակների ազդեցությամբ՝ Արևելյան Հայաստանում տեղի ունեցած հայահավաք դործընթացները: Հատուկ ուշադրություն է դարձված Խորհրդային Հայաստանի տնտեսության զարդացման վրա հայրենադարձության թողած ազդեցության, Հայրենական մեծ պատերազմի ժամանակ հայ ժողովրդի կրած մարդկային կորուստների, դրանց հետևանքների, հետպատերազմյան տարի-

ներին բնակչության բնական աճի ձևավորման բարենպաստ ընթացքի խնդիրներին:

Վ. Խոջաբեկյանի աշխատության մեջ գիտաքաղաքական ու կիրառական նշանակությամբ առանձնանում է խորհրդային իշխանության վերջին տարիներից մինչև երրորդ հազարամյակի սկիզբն ընդգրկող անցումային բարդ ու հակասական ժամանակաշրջանի տնտեսագիտական խորը վերլուծությունը: Հեղինակը հանգես է գալիս Հայաստանի ժողովրդագրության լայն հարցադրումներով՝ բնակչության ներհանրապետական տեղաշարժեր, արտագաղթ, տարիքային կազմի փոփոխություններ, Սպիտակի երկրաշարժի աղետալի հետևանքներ, արցախյան շարժման ընթացքում էթնիկ կազմի փոփոխություններ, սոցիալ-տնտեսական լծակների ազդեցությամբ՝ ընդհանուր գեոդրաֆիական լարվածության ուժեղացում:

Հատկանշական է, որ անվանի գիտնականը չի դնում մեզանում տարածված միայն ոչ նպաստավոր միգրացիոն գործընթացներն արձանագրելու ճանապարհով, այլ երկրի առաջընթացի ապահովման խորը մտահոգությամբ՝ նախանշում է անցանկալի ժողովրդագրական երևույթները կանխելու, սոցիալ-տնտեսական լարվածությունը մեղմելու կոկրետ ուղիներ: Պատահական չէ, որ մենագրության «Բնակչության զարգացման միտումները երրորդ հազարամյակի սեմին» խորագիրը կրող վերջին բաժնում՝ Հայաստանի ներկա ժողովրդագրական ու տնտեսական իրավիճակի խորագույն վերլուծության հենքի վրա հստակորեն պատկերացում է տրվում XXI դարի առաջին տասնամյակներին սպասվող ինչպես էթնիկ, այնպես էլ ողջ տնտեսական գործընթացների մասին: Ընդ որում, Վ.Խոջաբեկյանը կանխատեսվող արտագաղթերի կողքին չի բացառում ներգաղթի հավանականությունը և ազգանպաստ ժողովրդագրական միտումներն համարում է վերահսկելի ու կարգավորելի:

Խնդրո առարկա մենագրությունը լոկ փաստերի կամ դրանց վերլուծություններին նվիրված աշխատություն չէ: Այն հայ ժողովրդագրության բնագավառին պատկանող անգրանիկ հիմնարար մենագրություն է, որը նաև պետական մակարդակի վրա լուծումներ է առաջարկում, ինչը կարող է ծառայել երկրի տնտեսական կառավարումը գիտական հիմքերի վրա դնելուն: Հանրապետությունում նոր աշխատատեղեր ստեղծելու նպատակով հեղինակը շեշտադրում է բարենպաստ պայմանների ապահովումը՝ պետության ազգային քաղաքականության մշակման և կենսագործունեության համար: Այդ ուղղությամբ կատարվող աշխատանքներից պետք է լինի հանրապետության ներքին աղբյուրների հավաքագրմամբ, ազգային տնտեսության դիմանկարը բնորոշող և ռազմավարական նպատակներ հետապնդող առաջնահերթային ճյուղերի զարգացումը, դրանց նկատմամբ հովանավորչական քաղաքականության կիրառումը: Այս ոգով է հեղինակը դնում աշխատանքային ներուժի որակական մակարդակը համաշխարհային միջին մակարդակին մոտեցնելու պայմանների ապահովման խնդիրը, որի լուծումը հնարավորություն կընձեռի բնակչության արտագաղթի փոխարեն արտահանել բարձր որակավորում պահանջող դիտատար տեխնիկական նախագծեր, փորձաշրջան անցած ստեղծագործական մտքի արդասիք հանդիսացող յուրօրինակ արդյունքներ, տեխնոլոգիական մտահղացումներ, մշակումներ, գյուտեր ու հայտնագործություններ, մարդու բարձր կարողություններն ու հմտությունը բնութագրող այլ արտադրատեսակներ: Խիստ նախազգուշացում է պարունակում Վլադիմիր Խոջաբեկյանի միտքը ուղղված ազգային արժեքների պահպանմանը. «Նյութական կորստի վերականգնումը ժամանակի խնդիր է: Հոգևոր արժեզրկման վտանգն անվերադարձ է: Ավելին, այսօրվա ամեն մի հոգևոր կորուստ հեռահար է, հղի՝ սերունդներին գիտելիքներով, մտավոր ու հոգևոր զարգացման

մակարդակով տասնամյակներով ետ շպրտելու ահավոր վտանգով» (էջ 474): Ահազանգող է հնչում հետևյալ միտքը. «Քաղաքակիրթ երկրները նոր դար են մուտք գործում որպես սպասվելիք հուժկու գիտատեխնիկական առաջընթացը մարմնավորողներ, որոնցում փութաջանորեն կերտվում է դիտելիքներով զինված դարի քաղաքացին: Հայաստանը թմբրի մեջ է» (էջ 474):

Վլադիմիր Խոջաբեկյանի մենագրությունը կուռ ու ամբողջական բարձրարժեք աշխատություն է, որը նոր և մնայուն խոսք է ինչպես հայ տնտեսագիտության, այնպես էլ հայագիտության մեջ:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ